ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1-ՀԽ

Շրջակա միջավայրի նախարարին կից հասարակական խորհրդի նիստ

05.03.2021թ. ք. Երևան

Ժամը 14:00

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ

Ռ. Պետրոսյան նախագահ	Շրջակա միջավայրի նախարար, խորհրդի

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Ա. Առաքելյան	Շրջակա միջավայրի նախարարի խորհրդական
Ս. Պիպոյան	«Մասնագիտական կրթության բարեփոխումներ» ՀԿ, համահիմնադիր և փոխնախագահ, կենսաբանության գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մ. Չաքրյան	«Հանրային իրազեկման և մոնիթորինգի կենտրոն» ՀԿ, նախագահ
Վ. Բուռնազյան	«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ, փոխնախագահ
Ք. Սահակյան	«Էկոլոգիան հանուն խաղաղ գոյակցման» ՀԿ. նախագահ
Մ. Տաշչյան	EcoNews.am բնապահպանական տեղեկատվական կայք, խմբագիր
Վ. Սալահյան	«ԷկոԱղբ» բնապահպանական ՀԿ, ծրագրերի ղեկավար

Թ. Ենոքյան	«Կանաչ Հայաստան» բնապահպանական կրթական ՀԿ, համահիմնադիր
Տ. Ազիզբեկյան	«ԱրմԴայվինգ» Սուզորդների Ակումբ ՀԿ, նախագահ
Ն. Վարդանյան	«Հայաստանի անտառներ» բնապահպանական ՀԿ, նախագահ
Ա. Հովհաննիսյան	Տուրիզմի զարգացման փորձագետ
Ս. Թամոյան	ՀԱԱՀ Անտառագիտության և ագրոէկոլոգիայի ամբիոն, գյուղ. գիտությունների թեկնածու, դոցենտ էկոլոգ
Ա. Ծատուրյան	«Ամերիաբանկ» ՓԲԸ, Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի գնահատման մասնագետ
Մ. Ավետիսյան	«Այ Էս Էս Դի» համայնքների կայուն զարգացման նորարական լուծումներ» ՀԿ, նախագահ
Ա. Հովսեփյան	«Ազգային ջրային համագործակցություն» գիտական, էկոլոգիաան ՀԿ, նախագահ
Գ. Ներսիսյան	ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն, քաղաքային էկոլոգիա, քաղաքային կանաչապատում դասախոս, կենս. գիտությունների թեկնածու
Ա. Համբարձումյան	«Հասարակական ձայն» ՀԿ, էկոլոգիական իրավունքի մասնագետ
Տ. Ասատրյան	Անհատ բնապահպան
Ա. Հակոբյան	ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության հասարակայնության հետ կապերի բաժին, գլխավոր մասնագետ

ՀՐԱՎԻՐՎԱԾ ԷՐ

Ս. Շախկյան
օգնական

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարի

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Հարց 1. Շրջակա միջավայրի նախարարի 2021 թվականի փետրվարի 26-ի N 61-Լ հրամանով ստեղծված նախարարին կից հասարակական խորհրդի աշխատակարգի քննարկում,

Հարց 2. նախարարին կից հասարակական խորհրդի կազմում առանձին ոլորտային աշխատանքային խմբերի ձևավորում,

Հարց 3. նախարարին կից հասարակական խորհրդի հաջորդ նիստի օրակարգի և քննարկվող հարցերի առաջադրում:

Խորհրդի նախագահ Ռ. Պետրոսյանը հաստատման ներկայացրեց նիստի օրակարգը

Խորհրդի նախագահ Ռ. Պետրոսյանը հանդես եկավ բացման խոսքով- ողջունելով խորհրդի նոր կազմին՝ Ռ. Պետրոսյանը գործընկերներին շնորհակալություն հայտնեց խորհրդի աշխատանքների նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելու և աշխատանքներին մասնակցելու պատրաստակամության համար:Նշեց, որ նախարարին կից հասարակական նոր խորհրդի ձևավորման գերնպատակն է աջակցել նախարարությանը՝ վեր հանել մեր երկրում առկա բնապահպանական խնդիրները, գույքագրել դրանք, տեղային ու գլոբալ լուծումների առաջարկներ մշակել, հանդես գալ օրենսդրական փոփոխությունների նախաձեռնություններով:Ցանկացած քայլ, որը կհանգեցնի ավելի պաշտպանված, ավելի կառավարելի և զարգացող շրջակա միջավայր ունենալուն՝ քննարկելի է հասարակական խորհրդի աշխատանքային ձևաչափում:Միասին պետք է քննարկել՝ ինչպես կյանքի կոչել կարճաժամկետ, միջնաժամկետ և ռազմավարական հեռանկարային պլաններում լուծումներ պահանջող խնդիրների լուծման եղանակներն ու ծրագրերը:Նշեց, որ իր կարգավիճակը թե՛ որպես ոլորտի պատասխանատու, և թե՛ որպես քաղաքական թիմի ներկայացուցիչ, խորհրդի անդամների համար պետք է հանդիսանա այն լծակն ու գործիքակազմը, որի օգնությամբ նրանք կյանքի կկոչեն ոլորտի իրենց տեսլականը:

Տեղեկացրեց, որ խորհրդի կազմն ընտրվել է այնպիսի համամասնությամբ, որ այն ներառի առավել շատ ոլորտային մասնագետներ և ունենա լայն ներկայացվածություն:Խորհրդի անդամներին հորդորեց իրենց աշխատանքների հիմքում դնել պետական կառավարման, հանրային և բնապահպանական շահի բալանսավորումը:

Հիշեցրեց, որ Խորհրդի անդամներն ունեն լիազորությունների լայն շրջանակ, որի կիրառմամբ էլ պետք է կարողանան ոլորտին առնչվող սուր հարցերի, հանրային հնչեղության խնդիրների, ֆորսմաժորային իրավիճակներում ծագած հարցերի շուրջ իրացնել իրենց տրված խորհրդատվական մանդատը:

Ծանոթություն խորհրդի կազմի հետ, խորհրդի անդամների ներկայացում

Նախարարի ողջույնի խոսքին հաջորդեց ծանոթությունը խորհրդի անդամների հետ:

Խորհրդի անդամներն հերթով ներկայացան և շնորհակալություն հայտնեցին իրենց Խորհրդի կազմ ընդգրկելու համար՝ արդյունավետ գործունեություն մաղթելով խորհրդին:

Խոսքով հանդես եկավ Վ. Սալահյանը- նշեց, որ իրենց Խորհրդի կազմ բերել է այն մղումը, որ ցանկացած համակարգային լուծում պետք է կայացվի հետևյալ եռանկյունու ձևաչափով՝ հասարակություն-ոչ կառավարական պետական մարմիններ-պետական մարմիններ, և որ իրենք սիրով պատրաստ են կամուրջ հանդիսանալ պետության ու հասարակության միջև՝ օգնելով իրացնել հասարակական սեկտորի ու գիտական հատվածի հսկայական ներուժը:

Խոսքով հանդես եկավ Ռ. Պետրոսյանը- ներկայացրեց խորհրդի նիստի օրակարգում ընդգրկված առաջին հարցը՝ աշխատակարգի քննարկում:Նշեց, որ որևէ սահմանափակում չկա, խորհրդի անդամները կարող են ցանկացած մեխանիզմ, ցանկացած ընթացակարգ առաջարկել ու հանդես գալ առաջարկներով:Բոլոր որոշումները կայացվելու են փոխհամաձայնեցմամբ, բայց եթե կարիք լինի կանցկացվի նաև քվեարկություն:Որոշումների անկաշկանդությունը և ազատությունն ապահովելու համար կարող են անցկացվել նաև փակ քվեարկություններ:Առաջարկեց աշխատակարգի վերաբերյալ առաջարկներ հնչեցնել:

Առաջարկով հանդես եկավ Ս. Թամոյանը- առաջարկեց մեկ շաբաթ ժամկետ տրամադրել խորհրդի անդամներին՝ աշխատակարգի վերաբերյալ իրենց առաջարկները ներկայացնելու համար:

Առաջարկն ընդունվեց:

Խոսքով հանդես եկավ Ռ. Պետրոսյանը- ներկայացրեց խորհրդի նիստի օրակարգում ընդգրկված երկրորդ հարցը՝ նախարարին կից հասարակական խորհրդի կազմում առանձին ոլորտային աշխատանքային խմբերի ձևավորում:Առաջարկեց նախ գլոբալ առումով հավաքագրել, գույքագրել ոլորտի խնդիրները, ապա խմբավորել դրանք ըստ ոլորտների:

Քննարկումների արդյունքում նախնական առանձնացվեցին հետևյալ ոլորտները՝

- Շրջակա միջավայրի ոլորտի օրենսդրական բարեփոխումներ,
- էկոլոգիական կրթություն և էկոտուրիզմ,
- Շրջակա միջավայրի 5 բաղադրիչներին առնչվող ոլորտներ:

Առաջարկով հանդես եկավ Ս. Պիպոյանը- նա առաջարկեց ունենալ օրենսդրական բարեփոխումների և ռազմավարական խնդիրների ոլորտային խմբեր: Խորհուրդ տվեց խորհրդի անդամներին չկաշկանդել նեղ, ոլորտային խմբերով, որովհետև կարող է ոլորտում մեծ հնչեղություն ստանալ խնդիր կամ թեմա, որի շուրջ օրինակ խորհրդում ոլորտային խումբ ձևավորված չլինի:

Պատասխանեց Ռ. Պետրոսյանը – օրինակ բերեց այս պահին նախարարությունում ՇՄԱԳ օրենքի փաթեթի մշակման վրա աշխատող աշխատանքային խմբին, որի կազմում է նաև նախարարին կից հասարակական խորհրդի անդամ Ա. Համբարձումյանը:Նշեց, որ նախարարությանն անհրաժեշտ է նման դեպքերում խորհրդի իրավական ու գործնական փորձ ունեցող անդամների օգնությունը:Նշեց, որ գլոբալ ոլորտներ սահմանելը թուլացնում է անհատական պատասխանատվության դաշտը:25 հոգանոց խորհրդում պետք է լինի առնվազն 4-5 աշխատանքային ոլորտային խումբ:

Նախարարը տեղեկացրեց, որ խորհրդի անդամները կարող են ազատ համագործակցել նախարարության կենտրոնական ապարատի և ենթակա ստորաբաժանումների համապատասխան մասնագետների հետ, ստանալ իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը:

Պատասխանեց Ա. Համբարձումյանը- ներկայացրեց, որ առնվազն 4 օրենքներ՝ «Ընդերքի օրենսգիրքը», «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքը, «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենք և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրքն իրար այնքան փոխկապակցված են, որ ոլորտային աշխատանքային խմբերը պետք է փոխկապակցված լինեն և գործեն իրար լրացնելով:Առաջարկեց բոլոր խնդիրներին համակարգային մոտեցումներ ցուցաբերել:

Առաջարկով հանդես եկավ Ք. Սահակյանը- առաջարկեց բացի ոլորտային աշխատանքային խմբերը, ունենալ ճկուն աշխատանքային ձևաչափ, որպեսզի մասնագետները կարողանան աշխատել առաջադրված այնպիսի խնդրի վրա, որի աշխատանքային խմբում նրանք ընդգրկված չեն:

Առաջարկն ընդունվեց:

Խոսքով հանդես եկավ Մ. Չաքրյանը – առաջարկեց ուշադրություն դարձնել միջազգային կոնվենցիաների ու միջազգային համագործակցության հարցերին: Տեղեկացրեց, որ հատկապես վերջին պատերազմական իրադարձությունները ցույց տվեցին, որ կոնվենցիաներից շատերը մեզ համար խոցելի տեղեր ունեն և որ մենք միակողմանի շատ պարտավորություններ ենք ստանձնել:Իրենք արևելյան

գործընկերության քաղաքցիական հասարակության պլատֆորմի երրորդ խմբով էլ են կոնվենցիաների անդամակցության վերանայումներ ձեռնարկում:

Առաջարկեց նախարարին կից հասարակական խորհրդի աշխատանքների արդյունքում ուսումնասիրել միջազգային կոնվենցիաները և վեր հանել մեզ համար դրանց խոցելի կողմերը:

Պատասխանով հանդես եկավ Ռ. Պետրոսյանը-ողջունեց տիկին Չաքրյանի առաջարկը:Հայտնեց, որ միայն ուրախ կլինի, որ խորհրդի անդամները համագործակցեն միջազգային կոնվենցիաների ազգային համակարգողների հետ, նրանց հրավիրեն քննարկումների, հաշվետվություններ պահանջեն, վերջնարդյունքում կարողանան իրացնել ողջ պոտենցիալը:

Խորհրդի նախագահն ի մի բերեց հնչած առաջարկներն ու դիտարկումները, պայմանավորվածություն ձեռք բերվեց մեկ շաբաթվա ընթացքում էլեկրոնային նամակագրության միջոցով համակրգել բոլոր առաջարկները և ընտրել ոլորտային խմբերն ու դրանց պատասխանատուներին:

Խոսքով հանդես եկավ Ն. Վարդանյանը- առաջարկեց աշխատանքներ տանել կրթության էկոլոգիզացիայի ուղղությամբ:

Խոսքով հանդես եկավ Ռ. Պետրոսյանը-ներկայացրեց նիստի օրակարգում ընդգրկված երրորդ հարցը՝ նախարարին կից հասարակական խորհրդի հաջորդ նիստի օրակարգի և քննարկվող հարցերի մշակում:

Խոսքով հանդես եկավ Թ. Ենոքյանը- տեղեկացրեց, որ Հայկական բնապահպանական ճակատ քաղաքացիական նախաձեռնությունը տարբեր գրություններ, նամակներ ու փաստաթղթեր է ուղարկել շրջակա միջավայրի նախարարություն Ամուլսարի հարցի հետ կապված և ակնկալում են բաց, հանրային քննարկում լրագրողների մասնակցությամբ:

Պատասխանով հանդես եկավ Ռ. Պետրոսյանը- տեղեկացրեց, որ առաջարկը նախարարություն ուղարկեն գրավոր տեսքով, այն կքննարկվի և կտրվի պատասխան:

ՈՐՈՇՎԵՑ

Մեկ ամիս անց հրավիրել խորհրդի հաջորդ նիստը:Օրվա և ժամի վերաբերյալ խորհրդի անդամները լրացուցիչ կտեղեկացվեն:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Արձանագրեց

Ա. Հակոբյանը